ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր **կարիքների համար** իրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/24»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի հունիսի 23-ին** կնքված **N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/24»** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի նոյեմբերի 1-ին** կատարված **փոփոխությունների** վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ **երկկողմ** հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Ըստ պայմանագրի՝ Սոս Պետրոսյանի՝ «Հայկական կրկես» գրքի չափը ըստ կնքված պայմանագրի պետք է լիներ 60 x 84 1/8, 36 տպ. մամուլ (228 էջ), թուղթը՝ 80 գ/մ2 օֆսեթ: Հեղինակի պահանջով գրքի չափը փոփոխվել է՝ 70 x 100 1/16, 20.5 տպ. մամուլ (328 էջ), 80 գ/մ2 օֆսեթ թուղթը փոխարինվել է 115 գ/մ2 կավճապատ թղթով: Փոփոխության արդյունքում ավելացել է գրքի էջերի քանակը և բարձրացել է օգտագործվող թղթի որակը՝ Պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում 2-րդ չափաբաժնով սահմանված Սոս Պետրոսյան-«Հայկական կրկեսը» աշխատանքի մասով կատարվել է փոփոխություն: Մասնավորապես՝ Գրքի չափը փոփոխվել է՝ 70 x 100 1/16, 20.5 տպ. մամուլ (328 էջ), 80 գ/մ2 օֆսեթ թուղթը փոխարինվել է 115 գ/մ2 կավճապատ թղթով: Փոփոխության արդյունքում ավելացել է գրքի էջերի քանակը և բարձրացել է օգտագործվող թղթի որակը՝ Պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.3-րդ կետ, ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տաթևիկ Սուքիասյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/24» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «04» 11 2017թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր տնօրեն՝ Վ. Մարկոսյանի (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հունիսի 23-ին կնքված պետության կարիքների համար հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/24» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1. Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածը 2-րդ չափաբաժնով սահմանված Սոս Պետրոսյան-«Հայկական կրկեսը» աշխատանքի մասով շարադրել նոր խմբագրությամբ համաձայն կից հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 02508054, h/h 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2, հեռ.՝ 52-06-46, ՀՎՀՀ 02505322, h/h N 24100100555200 «Յունիբանկ» ՓԲԸ
Ս. Մուրադյան (ստորագրություն)	Վ. Մարկոսյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«23» «06» 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/24» ծածկագրով գնման պայմանագրի

2-րդ չափաբաժին

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝ Սոս Պետրոսյան-«Հայկական կրկեսը»

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	«Հայկական կրկեսը» գիրքը նախատեսված է կրկեսային արվեստով հետաքրքրվողների, արվեստի այս ճյուղն ուսումնասիրողների, ասպարեզն ուզումնասիրողների համար
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 70 x 100 1/16 Միջուկի չափը 17 x 24 սմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 20.5 տպագր. մամուլ (16 x 20.5=328 էջ) Տպաքանակ՝ 200 օրինակ: **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ կավճապատ Կշիռը՝ 115 գ/ք.մ Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12-14 Միջտողային հեռավորությունը 1.2 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Gohar Շապիկը՝ կավճապատ, 300 գ/մ Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1.Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Աշխատանքի կատարման ժամկետը		
Աշխատանքի փուլը 1 մակետ (ազդօրինակ)	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» նոյեմբեր, 2017թ.
Աշխատանքն ամբողջությամբ	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» դեկտեմբեր, 2017 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3
Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, h/h 900011012862
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործադրական վարչությունում

_____ Ա. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2,
հեռ.՝ 52-06-46,
ՀՎՀՀ 02505322, h/h N 24100100555200
«Յունիբանկ» ՓԲԸ

_____ Վ. Մարկոսյան
(ստորագրություն)